Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04 դեկտեմբեր 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-156/23» ծածկագրով գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Սույն թվականի հոկտեմբերի 20-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար էլեկտրական շարժիչների ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-156/23» ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն:

Համաձայն էլեկտրոնային աճուրդով ներկայացված գնային առաջարկների՝ «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն ներկայացրել է ամենացածր գնային առաջարկ և նոյեմբերի 7-ին կայացած նիստում ճանաչվել է հաղթող մասնակից:

Սույն թվականի նոյեմբերի 23-ին «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ, սակայն սահմանված ժամկետում «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետը՝ **որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից,** գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու հաջորդող օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Սիգմա Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**